ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-18/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

ք. Երևան « 20 » հուլիսի 2018թ.

Ժամը՝ **18** ^{00}

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ս. Բալոյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Է. Ոսկանյան, Ռ. Շահազիզյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Գ. Միրզոյան, Կ. Բզնունի
Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Հ.Վարդանյան

1. Տեղեկություն «ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-18/34» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

«ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-18/34» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ գնման ընթացակարգ), հայտերը բացվել են 2018 թվականի հուլիսի 13-ին, ժամը 11:30-ին էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am համակարգի միջոցով:

2. Ծառայության ձեռքբերման համար գնման հայտով սահմանված նախահաշվային գնի վերաբերյալ տեղեկություն

Ընդունել ի գիտություն: Գնման ընթացակարգի շրջանակներում գնվելիք ծառայության՝ գնման հայտով սահմանված նախահաշվային գինը կազմում է 19500000 ՀՀ դրամ:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցեն
«Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ	botanist@sci.am
«Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամ	Nune.harutyunyan@rec-caucasus.org

4. Հայտերի էլեկտրոնային ձևով կազմելու և ներկայացնելու՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

«Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ-ի և «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

«Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ-ի և «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի կողմից ներկայացվել են հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը:

Հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

1. «Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ-ի կողմից էլեկտրոնային գնումների համակարգում կցված փաստաթուղթը, թեև ստորագրված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այնուամենայնիվ փաստաթղթում ստորագրողի անունի և ազգանունի փոխարեն արտացոլված է «clienttreasury.minfin.am» արտահայտությունը,
2. «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի կողմից չափաբաժնի համարը լրացված է, իսկ ծառայության անվանումը՝ ոչ:

Հայտերում արձանագրված թերությունների վերաբերյալ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին), պարզաբանումը ստանալու նպատակով, և հիմք ընդունելով կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի դրույթները, հանձնաժողովի նիստը կասեցվել է մինչև լիազոր մարմնի կողմից արձանագրվածի վերաբերյալ պարզաբանում ստանալը, բայց ոչ ավելի քան մինչև սույն թվականի հուլիսի 20-ը:

Հաշվի առնելով, որ սույն թվականի հուլիսի 20-ի ժամը 18:00-ի դրությամբ լիազոր մարմնի կողմից պարզաբանում չի տրամադրվել, և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, գնահատող հանձնաժողովը որոշեց արձանագրված թերությունները համարել ոչ էական, և ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Ընդունել ի գիտություն:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնային առաջարկներ /ՀՀ դրամ/	
		«Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ	«Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամ
1.	բնապահպանական ցուցանիշների վերլուծություններ՝ բացառությամբ շինարարական աշխատանքների համար	18000000	16878000

«Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ-ի և «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի գնային առաջարկների հաշվարկներում անճշտություններ չկան:

7. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

8. Հանձնաժողովը որոշեց՝

8.1. Գնման ընթացակարգի շրջանակներում «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ «Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ-ին՝ 2-րդ,

8.2. Հանձնաժողովի քարտուղարին.

Ձեռնարկել Կարգի 43-րդ և 46-րդ կետերով սահմանված գործողությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

Գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի վարչական շենքում, ք.Երևան, Արմենակյան 129, 2-րդ հարկ, սենյակ № 5 սենյակում՝ Կարգի 46-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ստանալու օրվա ժամը 17:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ

10. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Գնման Պատասխանատու
/Գնահատման աշխատակազմի
պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) _____ Ս. Բալոյան

Գնման Պատասխանատու
/Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Է. Ոսկանյան

Գնման Պատասխանատու
/Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Ռ. Շահազիզյան

Գնման Պատասխանատու
/Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Գ. Միրզոյան

Գնման Պատասխանատու
/Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Կ. Բզնունի

Գնման Պատասխանատու
/Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) _____ Հ.Վարդանյան